

Բ.- Յարաբերապաշտութիւն

Յարաբերապաշտութեան⁽⁴⁷⁾ համաձայն, ընդհանուր եւ բացարձակ իմացութիւն չկայ եւ ամէն ինչ յարաբերական է: Այլ խօսքով ենթադրութեան մը ճշմարտութիւնը կախեալ է որոշ պայմաններէ, որոնք իրենց կարգին կախեալ են այլ պայմաններէ ... եւ այսպէս շարունակաբար: Պայմանաւորութեան այս շղթան վերջ կը գտնէ տեղ մը, որպէս՝ կամայական սկզբունք կամ ենթակայական համոզում:

Սկիզբէն ի վեր, եւ մինչեւ այսօր, բարոյագիտական յարաբերապաշտութիւնը, միշտ ընկերակցած է փիլիսոփայական բարոյագիտութեան եւ միշտ ալ՝ մերժուած, որովհետեւ այս ուղղութեան համաձայն, չկան նաեւ ընդհանուր եւ բացարձակ բարոյական արժէքներ, այլ ամէն ինչ յարաբերական է:

Մեր առօրեայ գործնական կեանքին մէջ, բարոյագիտական յարաբերապաշտութիւնը կը փորձէ ներկայանալ՝ որպէս *մետա-բարոյագիտական* (Meta-Ethics) դրոյթ՝ երկու կանոններով, զորս պիտի նշուին քիչ ետք:

Մետա-բարոյագիտութեան (այլ խօսքով՝ բարոյագիտութեան հիմնաւորման քննարկման) ոլորտէն ներս, *բարոյական բարի վարմունք* եւ *բարոյական ճիշդ վարմունք* հասկացութիւնները կրճատումներ են, որովհետեւ չի յիշուիր՝ թէ անոնք որո՞ւ համար կամ ի՞նչ օրինաչափի համաձայն *բարոյական բարի կամ ճիշդ վարմունք* են:

Մետա-բարոյագիտական դրոյթի համաձայն վերոյիշեալ հասկացութիւնները պէտք է վերլուծել հետեւեալ ձեւով.- *բարոյական բարի կամ ճիշդ վարմունք՝ «Զ»*-ի համար կամ «Օ» օրինաչափի համաձայն: Այստեղ «Զ» կրնայ ներկայացնել անհատ մը, ընկերային խումբ մը կամ ամբողջ ժողովուրդ մը. Նոյնպէս «Օ»-ի պարագան. «Օ»ն կրնայ օրինաչափ մը ըլլալ՝ անհատի մը, ընկերային խումբի մը կամ ամբողջ ժողովուրդի մը համար: Մետա-բարոյագիտական այս դրոյթէն, կարելի է երկու կանոններ հետեւցնել: Այժմ նկատի առնենք «Զ-ա» եւ «Զ-բ», որպէս երկու անհատներ (կամ երկու տարբեր ընկերային խումբեր), որոնք ունին իրենց իւրայատուկ «Օ-ա» եւ «Օ-բ» օրինաչափերը. վերոյիշեալ դրոյթէն ելլելով, կարելի է հետեւցնել, որ «Զ-ա» չի կրնար հետեւիլ կամ Նոյնիսկ միջամտել «Զ-բ»-ի բարոյական վարմունքին, օրինաչափերու տարբերութեան պատճառով: Այս մտածելակերպով, մետա-բարոյագիտական դրոյթէն կը յառաջանան, ինչպէս յիշեցինք, երկու հետեւեալ կանոնները.-

- **առաջին կանոնը**, չմիջամտելու կամ հանդուրժողութեան (անգլ.՝ Tolerance, գերմ.՝ Toleranz) կանոնն է. իսկ
- **երկրորդ կանոնը**, որ կ'ըսէ թէ իւրաքանչիւր անհատի բարոյական վարմունքը պէտք է համապատասխանէ ի՞ր պատկանած աւանդական օրինաչափերուն:

(47) **Յարաբերապաշտութեան** (Relativism) մասին, տե՛ս նաեւ Բարոյականութեան քննադատութիւնը, Մաս – 6, Էջ 233: